Թվագրված է՝ 27 հոկտեմբերի 2022թ.

Dated October 27th 2022

ԱՓԼ ՄԵԴԻԱ ԼԻՄԻԹԵԴ

APL MEDIA LIMITED

և and

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA

Համաձայնագիր Agreement N 647-22
01.11.22թ.

**«ԱՓԼ Մեդիա Լիմիթեդ»** ընկերությունը, որը հիմնադրված է Անգլիայում և Ուելսում՝ 3393234 գրանցման համարով, և որի գլխամասը գտնվում է Հայգեյթ Ստուդիոս 310 Ստորաբաժանում, 53-79 Հայգեյթ փողոց, Լոնդոն NW5 1TL, ի դեմս ընկերության տնօրեն Մարկ Սալմոնի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **ԱՓԼ**), մի կողմից,

**APL Media Limited,** a company incorporated in England and Wales with registration number 3393234 and whose principal office is at Unit 310 Highgate Studios, 53-79 Highgate Road, London NW5 1TL, represented by Director Mark Salmon, who is acting in accordance with the company's constitution (hereinafter referred to as "**APL**"), on one side

**Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը**, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Արմինե Խառատյանը, (այսուհետ՝ **«Պատվիրատու»**) հասցե՝ Մհեր Մկրտչյան 5, Երևան 0010, Հայաստան, մյուս կողմից,

**Ministry of Economy of the Republic of Armenia**, represented by the acting Secretary General Armine Kharatyan, of 5 Mher Mkrtchyan St, Yerevan 0010, Armenia (hereinafter referred to as the "**Client**"), on the other side

Միասին հիշատակվելով որպես «Կողմեր», փոխադարձաբար համաձայնեցին սույն համաձայնագիրը հետևյալին.

Jointly being referred to as the "**Parties**", mutually agreed to enter into the current agreement on the following:

## Գործառնական դրույթներ

## Operative Provisions

1. Պատվիրատուն տեղեկացնում է, որ սույն համաձայնագիրը կնքված է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի կարիքների համար սույն համաձայնագրի շրջանակներում ծառայության դիմաց վճարումն ապահովելով Զբոսաշրջության թիվ 1190-11002 ծրագրով հատկացված ֆինանսական միջոցների հաշվին:

1. The Client hereby brings to APL's knowledge that the current agreement is entered into for the needs of the Tourism Committee of the Republic of Armenia, by payment for the services under the present agreement being made at the expense of the finances, available within Tourism Project no 1190-11002.

2. Կողմերը ընդունում և հաստատում են, որ ԱՓԼ-ն «The Guardian-ի կողմից տարածվող Ճամփորդական Ուղեցույցում» ամսագրում 2022 թվականի մայիսի 28-ին տեղադրվել է ***«Հայաստան. ուղևորության շլացուցիչ ուղղություն՝ թաքնված հրաշքներով»*** վերնագրով հոդվածը (այսուհետ՝ «Մամլո ծառայություն»), ինչի կապակցությամբ Պատվիրատուի մոտ առաջացել է ԱՓԼ-ին համաձայնագրով նախատեսված չափով և կարգով վճարման պարտավորություն:

2. The Parties acknowledge and accept the fact that APL published, named "***Armenia- a dazzling destination with hidden wonders***" article (hereinafter referred to as "Media Services") in "The Travel Guide Distributed with the Guardian" on 28 May, 2022 which has led to the Client's obligation to pay to APL in the amount and in the fashion laid down in the present agreement.

3. Պատվիրատուն հաստատում է, որ Մամլո ծառայությունը համապատասխանում է իր պատվերին, ցուցումներին և չունի առարկություններ:

3. The Client admits the fact that the Media Services comply with its order, instructions and has no objection.

4. Համաձայնագիրը համարվում է կնքված սույն մեկ միասնական փաստաթուղթը կազմելու միջոցով:

4. The contract is deemed to be executed through this single document.

5. Մամլո ծառայություններն իրենց բովանդակությամբ և տեսքով, ինչպես հրապարակված են, համապատասխանում են կիրառելի իրավունքին և Միացյալ Թագավորության գովազդային կանոնագրքերին, որոնք սահմանված են Գովազդային Ստանդարտների իրավասու մարմնի կողմից, ինչպես նաև ԱՓԼ չափանիշներին:

5. The content and the design of the Media Services, as they are published, comply with applicable laws and UK advertising codes set out by Advertising Standards Authority, as well as APL standards.

6. Պատվիրատուն երաշխավորում է և հաստատում է, որ իր կողմից տրամադրված բոլոր նյութերը և տեղեկատվությունը չեն կրում զրպարտիչ բնույթ կամ անօրինական չեն կամ չեն հանդիսանում երրորդ անձի իրավունքների խախտում:

6. The Client warrants and represents that any materials copy or information supplied by them is not defamatory or an infringement of the rights of any third party.

7. Պատվիրատուն սույնով համաձայնություն է տալիս ԱՓԼ-ին

7. The Client hereby consents to APL processing any personal data supplied

մշակելու և օգտագործելու իր անձնական տվյալները, որոնք տրամադրվել են (Պատվիրատուն հավաստիացնում է ԱՓԼ-ին, որ այդ տվյալները ձեռք են բերվել կիրառելի կանոնակարգերի պահանջներին խիստ համապատասխան) կամ ձեռք են բերվել Պատվիրատուի հանդեպ ԱՓԼ համաձայնագրի պարտավորու-թյունների կատարման ընթացքում՝ համապատասխան «Անձնական տվյալ-ների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

by it (which Client warrants to APL has been obtained in compliance with all applicable regulations) or obtained in the course of fulfilling APL contract obligations to Client in accordance with Law on "Personal Data Protection" of the Republic of Armenia.

8. Մամլո ծառայությունհների գինը կազմում է 3900 ֆունտ ստերլինգ:

8. The price for the Media Services shall be GBP3900.

9. Սույն համաձայնագրի 8-րդ կետով սահմանված Համաձայնագրի գինը ենթակա է վճարման սույն համաձայ-նագրի կնքումից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, կողմերն ընդունում են, որ վճարումը միջազգային փոխանցում է, ուստի վճարումը Հայաստանի Հանրապետության բանկերի կողմից SWIFT համակարգով փոխանցելու վերաբերյալ հաստատումը կուղարկվի ԱՓԼ-ին էլեկտրոնային եղանակով գումարը փոխանցելուց անմիջապես հետո:

9. The contract price stipulated in clause 8 of the current agreement shall be paid within five business days from the moment of the execution of this agreement. The Parties acknowledge that the payment is deemed to qualify as an international wire transfer. Therefore, the slip of the wire transfer confirming the wire transfer through SWIFT shall be sent to APL through an email after the wire transfer is conducted by the banks in the Republic of Armenia. All transfer costs shall be borne by the Client

10. Փոխանցումը կկատարվի ֆունտ ստերլինգով Միացյալ Թագավորու-թյունում բացված ԱՓԼ բանկային հաշվեհամարին առանց պահումների, փոխանցման ծախսերը կկրի Պատվիրատուն: Փոխանցումը իրականացվում է սույն համաձայնագրի շրջանակներում տրված հաշվիվ ապրանքագրի հիման վրա:

Բանկային հաշվեհամարի տվյալները.

Sort Code : 600001

10. The contract price shall be paid in pounds sterling to the UK bank account of APL in cleared funds, with transfer costs for the account of Client.

Bank account details:

Sort Code : 600001

Account No: 48868140

Account No: 48868140

Bank : NatWest GBP MAIN ACCOUNT

SWIFT Code : NWBKGB2L

IBAN Code: GB63NWBK60000148868140

Bank : NatWest GBP MAIN ACCOUNT

SWIFT Code : NWBKGB2L

IBAN Code: GB63NWBK60000148868140

14. Համաձայնագրի համար չի առաջանում ավելացված արժեքի հարկ, ուստի Պատվիրատուի կողմից ԱԱՀ չի վճարվում:

11. The contract price is exclusive of value added tax and, thus, the Client shall be under no duty to pay VAT.

15. Սույն համաձայնագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն համաձայնագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն համաձայնագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել համաձայնագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

12. The Parties are discharged from obligations on the whole or partly for being unable to perform their duties, provided that the non-performance is caused by a force majeure which has arisen after the agreement has been concluded and which the Parties could not have unforeseen or have prevented, such as earthquakes, floods, wars, martial laws and emergency situations, political riots, strikes, cease of telecommunication operation, decrees of state institutions which make the performance of the obligation stipulated hereunder impossible. If the force majeure lasts longer than three months, each of the Parties has the right to terminate the current agreement by putting the other Party on notice.

16. Կողմերի միջև վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ անհրաժեշտության դեպքում կազմակերպելով հանդիպումներ և քննարկումներ:

13. All disputes arising out between the Parties shall be resolved through negotiations, where necessary holding meetings and arranging discussions

17. Սույն Համաձայնագիրը ենթակա է կարգավորման Անգլիայի և Ուելսի օրենքներով, իսկ սույն համաձայնագրից բխող վեճերն ընդդատյա են Անգլիական դատարաններին:

14. This agreement shall be subject to the laws of England and Wales. Disputes arising out of this agreement are subject to the jurisdiction of the English Courts.

18. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզվով: Հայերեն և անգլերեն լեզվով տեքստերի միջև անհապատասխանությունների դեպ-քում գերակայությունը տրվում է անգլերեն լեզվին:

15. This agreement is made in Armenian and English languages. In case of discrepancies between the Armenian and English texts, English text shall prevail.

Ստորագրված է անունից և վերջինիս համար

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

Signed for and on behalf of

**Ministry of Economy of the Republic of Armenia**

_______________________________

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող
Արմինե Խառատյան

**Acting Secretory General**
**Armine Kharatyan**

Ստորագրված է անունից և վերջինիս համար

**ԱՓԼ Մեդիա Լիմիթեդ** Մարկ Սալմոն

Signed for and on behalf of

**APL Media Limited** Matthew Jackson

**Տնօրեն**

**Director**